**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

«15» օգոստոսի 2022թ.

# ՀՐԱՄԱՆ N 405-Լ

«ՎԻԶ ԷՅՐ ՀԱՆԳՐԻ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի մայիսի 19-ի N 245-Ա հրամանը և «Վիզ Էյր Հանգրի» ավիաընկերության 2022 թվականի օգոստոսի 8-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Վիզ Էյր Հանգրի» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/ երթուղով՝ 2022 թվականի օգոստոսի 24-ից մինչև 2022 թվականի օգոստոսի 31-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:
2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի մայիսի 19-ի N 245-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում

Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/ երթուղով իրականացվող հավելյալ չվերթներ, որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի մայիսի 19-ի N 245-Ա հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնությունը:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Կոմիտեի պաշտոնական կայքէջում:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

8/15/2022

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 123/2022
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 123/2022
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR
SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

| | |
|---|---|
| Օդանավ շահագործողը<br>Aircraft Operator | «Վիզ էյր Հանգրի» ՍՊԸ<br>"Wizz Air Hungary" LLC |
| Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը)<br>Type(s) of aircraft(s) | A320 (320, Y180), A320 (320, Y186), A321 (321, Y230), A320neo (32N, Y186), A321neo (32Q, Y239) |
| Հաճախականությունը<br>Frequency | շաբաթական 1 չվերթ<br>1 flight per week |
| Երթուղին<br>Air route | Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/<br>Larnaca/LCLK/-Yerevan/UDYZ/-Larnaca/LCLK/ |
| Թույլտվության գործողության ժամկետը<br>Permission validity | 24/08/2022 մինչև 31/08/2022<br>24/08/2022 till 31/08/2022 |

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF CIVIL
AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

15.08.2022
(տալու ամսաթիվը)
(date of issue)